



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՅՈՑ ՉՈՐԻ  
ՄԱՐԶՊԵՏ**

<<20>> <<դեկտեմբեր >> 2017 թ

N 142


ք. Եղեգնաձոր

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն  
ԱՐԱՄ ԱՐԱՄՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի N 1079-Ա որոշման 2-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի «ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպության վերաբերյալ 2017 թվականի դեկտեմբերի 15-ին պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխությունները .

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ ԵՄ**

1. 2017 թվականի դեկտեմբերի 20-ից լուծել «ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի քաղաքային վարժարան » պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արամ Արամյանի հետ կնքած 2016 թվականի փետրվարի 1-ի N290 աշխատանքային պայմանագիրը:
2. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



**Հ.ՍԱՐԳՍՅԱՆ**